Ա. եւ Բ. խումբի միաւորները միասին առած ուրեմն կազմում են 1,275,000 շունչ եւ կամ Անդրկովկասի ողջ բնակչութեան 22·41 տոկոսը: Եւ սակայն երբ խօսք է լինում ազգային փոքրամասնութեանց իրաւունքների պաշտպանութեան մասին, բնականաբար Ա. եւ Բ. խմբի միաւորների հետ եւ նրանց համահաւասար կերպով նկատի առնելու ենք նաեւ Գ. խումբի միաւորներին — իրենց ազգային հողամասից դուրս ապրող վրացիներին, լեռնականներին, եզիդիներին, քրդերին եւայլն: Սրանց էլ հաշուելով՝ պիտի տեսնենք ուրեմն, որ Անդրկովկասի բնակչութեան մօտ 1/4-ը եւ կամ շուրջ 1,400,000 հոգի ազգային փոքրամասնութեանց են պատկանում: Այսինքն՝ այդչափ հոգի դուրս են գտնւում իրենց ազգային-պետական եւ կամ գոնէ ազգային-ինքնավարական մարմիններից:

Զուտ թուական տեսակէտից եթէ վերցնելու լինինք, նշանակում է Անդրկովկասի ազգային փոքրամասնութիւնները միասին առած մօտաւորապէս այնպիսի ուժ են ներկայացնում, ինչ որ նրա ազգային գլխաւոր տարրերը՝ վրացիները, թաթարները եւ հայերը՝ առանձին-առանձին: Եթէ միւս կողմից, հայ եւ թաթար ազգային փոքրամասնութիւնները չկամենանք բաժանել իրենց մայր հատուածներից, այլ մնացած ազգային իսկական փոքրամասնութիւնները միայն վեր առնելու լինինք, դրանց հետ միասին նաեւ այն փոքր ազգերը (աջարացիներ, արխազներ, օսեր), որոնք թէեւ ունին իրենց ինքնավար կազմերը, բայց փաստօրէն ազգային փոքրամասնութիւն են ներկայացնում, դարձեալ համեմատութիւնը զգալիօրէն չի փոխուի, հանդէպ գլխաւոր տարրերի: Բնականաբար ազգային փոքրամասնութեանց տեսակարար կշիռը աւելի եւս կը ծանրանայ, եթէ առհասարակ նրանց բոլորին միասին հաշուելու լինինք:

Ինչպէս էլ դարձնելու լինինք խնդիրը, ո՛ր տարրերին եւ կամենանք «ազգային փոքրամասնութիւն» սինակի տակ առնել, նրանք դարձեալ կը կազմեն աչքառու թիւ: Այսպիսով, Անդրկովկասի ազգային, քաղաքական եւ տնտեսական խնդիրների կարգաւորման հարցում նրանց վերապահուած է մի աչքառու տեղ:

Հայ ազգ. քաղաքականութիւնը պարտաւոր է այդ պարագան միշտ էլ աչքի առաջ ունենալ ոչ միայն սկզբունքային՝ ազգային փոքրամասնութիւնների լաւագոյն պաշտպանութեան տեսակէտից, այլ եւ իր սեփական շահերից դրդուած: Այդ կրկնակ տեսակէտները համերաշխում են. մեր կարծիքով, շատ սերտօրէն: Երկու կողմերն էլ աւելի կամ պակաս չափով զրկուածների բանակում են գտնւում, երկու կողմերն էլ պահանջատէրի դերում են հանդէպ միւսների, ապա ուրեմն բնական է, որ նրանք շատ խնդիրներում աջակից հանդիսանան իրար:

Ինչ վերաբերում է ուրեմն սեփական հողամաս ունեցող, բայց ինքնավարութիւնից զուրկ ազգային տարրերին, նրանք միասնաբար պէտք է հողային ինքնավարութեան պահանջը դնեն առաջին հերթին: Ինչ վերաբերում է միւսներին, ազգային-մշակութային ինքնավարութիւնով պիտի փոխարինուի այն:

Կարող է առարկուել, թէ արդէն իսկ գոյութիւն ունի այդ ազգային-մշակութային ինքնավարութիւնը — ինչպէս առհասարակ Խորհրդային Միութեան մէջ, այնպէս նաեւ Անդրկովկասում:

Բայց նախ՝ Խորհրդային վարչաձեւը ինչպէս որ ազգային անկախութեան դաղափարն է աղճատուած ձեւով հասկանում, ինչպէս որ նա ազգային հողամասերն է քմահաճօրէն ձեւում (օրինակ Հայաստանի պարագան), այնպէս նաեւ՝ ազգային-մշակութային ինքնավարութեան դաղափարն է իւրայատուկ ձեւով հասկանում:

Երկրորդ՝ երբ մենք խօսում ենք Անդրկովկասեան ազգերի քաղաքական փոխադարձ յարաբերութեան մասին, որ այսօր եւս շատ է հեռու գոհացուցիչ անուանուելուց, մենք նկատի չունինք միայն այսօրը, ներկան, այլեւ՝ ապագան,— մի այնպիսի դրութիւն, որ հիմնուած լինէր արդարութեան, ազգային ինքնորոշման սկզբունքի վրայ, ստեղծելով բնականոն վիճակ այդ երկրամասում:

Եթէ խիստ դատելու լինինք, ոչ Խորհրդային Միութեան մէջ եւ ոչ էլ Անդրկովկա-